ConverseBank

Ամառային
ժամկետային ավանդի ներգրավման ակցիայի տեղեկատվական ամփոփագիր

Ակցիան գործում է 2017թ. հունիսի 16-ից մինչև 2017թ. օգոստոսի 31-ը ներառյալ

Ակցիայի շրջանակներում «Կոնվերս Բանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) կողմից **Ամառային** ժամկետային ավանդի (այսուհետ՝ Ավանդ) ընդունման պայմաններն են՝

Ավանդի արժույթ	ՀՀ դրամ	
Ավանդի տեսակ	Առանց ավելացման իրավունքի	
Ավանդի գործողության ժամկետ	12 ամիս	
Ավանդի տարեկան պարզ տոկոսադրույք	**10 %**	Առցանց ներդրման դեպքում՝ **10.5 %**
Ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերության չափ	**11.08%**	Առցանց ներդրման դեպքում՝ **11.7 %**
Տոկոսների վճարում	Ժամկետի սկզբում Տոկոսները չեն կապիտալացվում	
Ավանդի գումարի նվազագույն չափ	100,000 ՀՀ դրամ	
Մեկ ավանդատուի անունով Ավանդի / Ավանդների առավելագույն հանրագումար	50,000,000 ՀՀ դրամ	

- Ակցիան գործում է ֆիզիկական անձանց համար:
- Անկանխիկ մուտքագրված Ավանդի գումարի կանխիկ վճարումը ժամկետի ավարտին կկատարվի առանց կանխիկացման միջնորդավճարի գանձման:
- Ավանդատուի ցանկությամբ Ավանդի ժամկետի ավարտին Ավանդի պայմանագրի ժամկետի երկարաձգումը կկատարվի տվյալ պահին Բանկում գործող **Պրոգրես** կամ **Օրական** ավանդի պայմաններով:

1. **«Կիլիկիա» և «Նոր Նորք» մասնաճյուղերում անհատական պահատուփերի ծառայությունից օգտվելու դեպքում կիրառվում է գործող սակագնից 50% նվազեցված սակագին:**
2. **Ակցիայի շրջանակներում Ավանդ ներդրած հաճախորդներին առաջարկվում է ԱրՔա Կլասիկ չվերականգնվող սահմանաչափով վարկային քարտ (այսուհետ՝ Վարկային Քարտ) հետևյալ պայմաններով.**

Վարկային քարտը կարող է օգտագործվել Վարկային քարտի տրամադրման օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառապես այն կազմակերպությունների վաճառակետերում տեղադրված՝ Բանկի POS-տերմինալներով գնում(ներ) կատարելու նպա տակով, որոնց հետ Բանկը կնքել է **Քվոտայով** գործարքների իրականացման համագործակցության պայմանագիր:

Վարկային սահմանաչափի գումար	Ավանդի գումարի եռապատիկ, սակայն ոչ ավել, քան 1,500,000 ՀՀ դրամ

Վարկի մարման առավելագույն ժամկետ	15 ամիս, ընդ որում վարկի գծով առաջին մարումը կատարվում է 4-րդ ամսից սկսած (առաջին 3 ամիսների համար սահմանվում է վարկի գումարի մարման արտոնյալ ժամանակաշրջան)
Վարկի մարման եղանակ	Անուիտետային՝ ամսական հավասարաչափ մարումով
Տարեկան անվանական տոկոսադրույք	0%
Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման օրինակ	Վարկ – 1,500,000 ՀՀ դրամ ժամկետ – 15 ամիս Արտոնյալ ժամկետ – 3 ամիս Վերոնշյալ պայմանների դեպքում փաստացի տոկոսադրույքը կկազմի 0.85%
Վարկի տրամադրման վճար	10,000 ՀՀ դրամ (գանձվում է միանվագ՝ մինչև վարկային քարտի տրամադրումը)
Քարտի տրամադրման և քարտային հաշվի սպասարկման վճար	0 ՀՀ դրամ
Տույժեր և տուգանքներ	**Պայմանագրով սահմանված մարման ժամկետների խախտում թույլ տալու դեպքում Վարկառուն Բանկին, վճարում է տույժ՝ ուշացման յուրաքանչյուր օրվա համար՝ ժամկետանց վարկի 0.5 % չափով:** **Վարկի գծով վճարումների ուշացման 5-րդ աշխատանքային օրը Բանկի կողմից կիրառվում է միանվագ տուգանք՝ 5,000 ՀՀ դրամի չափով:**
Ապահովում	Մինչև Ավանդի գումարի 100%-ի չափով Վարկերի դեպքում՝ Ավանդային հաշվին առկա դրամական միջոցները (դրանց համապատասխան մասը), իսկ Ավանդի գումարի 100%-ը գերազանցելու դեպքում՝ գերազանցող մասով՝ առանց ապահովման
Վարկ/գրավ հարաբերակցություն	Մինչև 300%
Վարկունակության հանդեպ պահանջներ **Կիրառվում է միայն վարկ/գրավ հարաբերակցությունը 100%-ը գերազանցելու դեպքում**	Դիմորդը վարկային հայտի ներկայացման օրվա դրությամբ պետք է լինի գրանցված աշխատակից, և դիմելու օրվան նախորդող մեկ տարվա ընթացքում. ▪ չպետք է ունենա «ստանդարտ» դասից ավելի խիստ դասով դասակարգված վարկային պարտավորություններ (ներառյալ՝ երաշխավորություններ), և ▪ վարկերի գծով ժամկետանց օրերի հանրագումարը չպետք է գերազանցի 20
Այլ պայմաններ	Համաձայն Բանկի Arca Classic քարտի պայմանների

3. Ակցիայի շրջանակներում 200,000 ՀՀ դրամ և ավել Ավանդ ներդրած Ավանդատուներին տրամադրվում են վճարային քարտեր՝ հետևյալ պայմաններով.

3.1 Քարտատեսակ, վարկային սահմանաչափ և առավելություններ

Ավանդի գումար	Քարտատեսակ	Վարկային սահմանաչափի առավելագույն գումար*	Առավելություններ**
200,000 ՀՀ դրամից մինչև 2,000,000 ՀՀ դրամ	Visa Classic MasterCard Standard Woman's Card	Ավանդի գումարի 90%	Առևտրային կետում առաջին գործարքի (ներառյալ կից և հավելյալ քարտերով կատարված) դեպքում՝ 10% CashBack, բայց ոչ ավել, քան 5,000 ՀՀ դրամ
2,000,000 ՀՀ դրամից մինչև 10,000,000 ՀՀ դրամ	Visa Gold MasterCard Gold		Առևտրային կետում կամ կետերում առաջին 3 գործարքների (ներառյալ կից և հավելյալ քարտերով կատարված) դեպքում՝ 10% CashBack, սակայն յուրաքանչյուր գործարքի համար ոչ ավել, քան 10,000 ՀՀ դրամ
10,000,000 ՀՀ դրամ	Visa Platinum (+ Priority Pass Card՝ հաստատմամբ)		

* տրամադրվում է, եթե Ավանդի մարման ժամկետին մնացել է ոչ պակաս, քան 30 օրացուցային օր; վարկային սահմանաչափի մարման ժամկետը Ավանդի մարման ժամկետն է

** տարածվում են միայն վարկային սահմանաչափ ունեցող հաշվարկային քարտերի վրա

Քարտային հաշվի սպասարկման վճար	Ավանդի գործողության ընթացքում՝ 0 ՀՀ դրամ Ավանդի մարմանը հաջորդող օրվանից մեկ տարի հետո վճարը գանձվում է՝ համաձայն Բանկի համապատասխան քարտի պայմանների:
Տարեկան տոկոսադրույք (հաշվարկային քարտերի դեպքում)	Ավանդի տոկոսադրույք + 5.5%

3.2 Այլ պայմաններ

Վարկային սահմանաչափի տեսակ	Վերականգնվող
Տոկոսների վճարման կարգ և արտոնյալ ժամանակահատված	Հաշվարկային քարտերը տրամադրվում են վարկային սահմանաչափի արտոնյալ ժամանակահատվածով, ընդ որում, քաղվածքի ձևավորման համար ամիսը սահմանվում է 1-30 (կախված ամսվա վերջին օրվա ամսաթվից), իսկ մարման համար տրամադրվում է 10 օր արտոնյալ ժամանակահատված:
Կանխիկացման միջնորդավճար	Հաշվարկային քարտերի համար. ▪ Բանկի և Արքա համակարգի այլ բանկերի կանխիկացման կետերից՝ 3%, ▪ ԱրՔա համակարգից դուրս գործող կանխիկացման կետերից՝ 3%, նվազագույնը 1,500 ՀՀ դրամ: Դեբետային քարտերի համար. ▪ Համաձայն Բանկի համապատասխան քարտի պայմանների
Անկանխիկ փոխանցման միջնորդավճար	Քարտից քարտ, քարտից բանկային հաշիվ փոխանցումներ՝ 3%

3.3 Ավանդի վաղաժամկետ դադարեցման դեպքում

Ավանդի գումարը՝ ամբողջությամբ կամ մասնակի, անկախ դադարեցման հիմքից, Ավանդի ներդրման օրվանից 6 ամսվա ընթացքում վաղաժամկետ մարելու դեպքում **տրամադրված վճարային քարտի պայմանները սահմանվում են Բանկում գործող համապատասխան վճարային քարտերի պայմանների համաձայն,** իսկ քարտով գործարք կատարելիս վճարված **CashBack-ի գումարը նվազեցվում է Ավանդի մայր գումարից:** Ավանդի վաղաժամկետ մարման դեպքում **Ավանդի գումարն առաջնահերթ ուղղվում է տրամադրված վարկային սահմանաչափի մարմանը:**

3.4 CashBack տրամադրման պայմաններ

1. CashBack-ը տրամադրվում է այն Ավանդատուներին, ովքեր քարտի բացման օրվանից հետո 30 օրացուցային օրվա ընթացքում կկատարեն առևտրային կետ/երում անկանխիկ գործարք/ներ/ և որոնք վաղաժամկետ հետ չեն պահանջի Ավանդի գումարը առաջին 6 ամիսների ընթացքում, ընդ որում, քարտի բացման օր է համարվում Բանկի կողմից քարտի տպագրման օրը:
2. CashBack-ը տրամադրվում է ՀՀ և Արցախի առևտրային կետ/երում քարտով կատարված անկանխիկ գործարքի/ներ/ համար:
3. CashBack ծրագրի շրջանակներում առևտրային կետ/երում կատարված գումարը հաճախորդի հաշվից ելքագրվում է ամբողջությամբ, իսկ գումարի հետ վերադարձը հաշվարկվում և հաճախորդի հաշվին մուտքագրվում է 30 օրացուցային օրվա լրանալու ամսվան հաջորդող ամսվա մինչև 15-ը:
4. CashBack-ը չի տարածվում համացանցով (ինտերնետով) առցանց (online) եղանակներով կատարված գնումների վրա:
5. Այն դեպքում, երբ տվյալ օրը կամ համապատասխան առևտրային կետ/երում Բանկի կողմից տրամադրվում է այլ Cashback, ապա համապատասխան քարտի համար այս ամփոփագրում նշված CashBack-ի պայմանները չեն կիրառվում:

6. Այս ամփոփագրում նշված CashBack-ի պայմանները տարածվում են միայն 2016թ.-ի հոկտեմբերի 1-ից հետո թողարկված Բանկի **հաշվարկային քարտերով** տրամադրված վարկային սահմանաչափ ունեցող հաճախորդների/վարկառուների վրա:

3.5 Այլ պայմաններ՝ համաձայն Բանկում գործող պայմանների:

Ուշադրություն

Հաշվեգրման ենթակա տոկոսներից գանձվում է եկամտային հարկ: ՀՀ տարածքում ներդրված ավանդների համար եկամտային հարկը կհաշվարկվի 10% դրույքաչափով, իսկ ԼՂՀ տարածքում՝ 5% դրույքաչափով:

Հաշվարկման օրինակ

Հետևյալ պայմանների դեպքում՝

Ավանդի սկզբնական գումար	500,000 ՀՀ դրամ
Ավանդի ներդրման օր	01/07/2017
Ավանդի ներդրման ժամկետ	1 տարի (մինչև 01/07/2018)
Տարեկան տոկոսադրույք	10.5%
Տոկոսների վճարումը	Ժամկետի վերջում
Եկամտային հարկ	10% տոկոսային եկամտից

Ավանդի տոկոսագումարի հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ՝

Մեկ օրվա տոկոսային եկամուտ՝

500,000 (ներդրված գումար) x 10.5/100 (տարեկան տոկոսադրույք) / 365 (տարվա օրերի քանակ) = 143.84

Տասներկու ամսվա ընդհանուր տոկոսային եկամուտ՝

143.84 x 364 (ավանդի ժամկետից նվազեցրած 2 օր՝ ավանդի ներդրման (01/03/2017) և վճարման (01/03/2018) օրերը) = 52,357.76

Տասներկու ամսվա զուտ տոկոսային եկամուտ՝

52,357.76 – 5,235.78 (ընդհանուր տոկոսային եկամտի 10%-ը՝ եկամտային հարկով հարկման ենթակա գումար) = 47,121.98 (ավանդատուին յուրաքանչյուր ամիս վճարվող տոկոսագումարների հանրագումարը)

Ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերության չափը

Տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա, իսկ տարեկան տոկոսային եկամտաբերությունը ցույց է տալիս, թե որքան եկամուտ կստանա Ավանդատուն, եթե Ավանդի դիմաց ստացված տոկոսագումարները վերաներդրվեն Ավանդի տեսքով:

Ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերության չափի հաշվարկման համար հիմք է ընդունվում ՀՀ ԿԲ ««Բանկային ավանդների տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկումը» Կանոնակարգ 8/02»-ով սահմանված հետևյալ բանաձևը՝

$$A = \sum_{n=1}^{N} \frac{K_n}{(1 + APY)^{\frac{D_n}{365}}}$$

որտեղ՝

- A – ավանդի սկզբնական գումարն է:
- n – ավանդի դիմաց դրամական հոսքերի հերթական համարն է:
- N - ավանդի դիմաց դրամական հոսքերի վերջին համարն է (ներառյալ նաև ավանդի ներդրման պահին դրամական հոսքը), որից հետո ավանդային պայմանագրի ժամկետը համարվում է ավարտված:
- Kn-ավանդի ներդրման պահին և/կամ ավանդի գործողության ընթացքում ներդրված ավանդի և/կամ կապիտալացված տոկոսագումարների, առկայության դեպքում պարտադիր վճարների հոսքեր:
- Dn- այն թիվն է, որը ցույց է տալիս, թե քանի օր է անցել ավանդի ներդրման օրից մինչև ավանդի դիմաց կատարվող հերթական՝ n-րդ դրամական հոսքերը ներառյալ:

Ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերությունը՝ 11.08%, իսկ առցանց ներդրման դեպքում՝ 11.7%:

Ավանդի ընդունման ընդհանուր պայմանները

1. Ավանդի ներդրումը հավաստվում է պայմանագրով:
2. Պայմանագրով որպես ավանդատու կարող են հանդիսանալ մեկից ավելի անձինք, այդ դեպքում պայմանագիրը ստորագրվում է բոլորի կողմից և ավանդի տնօրինումն ու օգտագործումը կատարվում է համատեղ սեփականության իրավունքով:
3. Եթե ավանդատու են հանդիսանում մեկից ավելի անձինք, ապա ավանդի գումարը և նրա վրա հաշվարկված տոկոսները կարող են վճարվել կամ բոլորի պարտադիր ներկայությամբ կամ միայն որևէ մեկին՝ մյուսների կողմից ստորագրված և նոտարական կարգով վավերացված լիազորագրի հիման վրա:
4. Ավանդի գործողության ընթացքում ավանդային գումարի համալրում և պակասեցում չի թույլատրվում:
5. Ավանդատուն իրավունք ունի ավանդը Բանկ ներդնել երրորդ անձի անունով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
6. Ավանդը հնարավոր է ներդնել նաև առցանց (առանց երրորդ անձի օգտին ավանդի ներդրման հնարավորության)՝ Առցանց Բանկ համակարգի օգնությամբ https://conversebank.am/hy/internet-banking/ :

Տոկոսների հաշվարկման եվ վճարման կարգը

1. Ավանդի գումարի վրա տոկոսները հաշվարկվում են ավանդային հաշվի փաստացի մնացորդի նկատմամբ՝ ավանդը Բանկ մուտք լինելու հաջորդ օրվանից մինչև այն ավանդատուին վերադարձնելու կամ ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրը:
2. Բանկը տոկոսների հաշվարկը կատարում է պարզ տոկոսադրույքով՝ որպես բաժանարար հիմք ընդունելով տարին 365 կամ 366 օր նահանջ տարվա համար:
3. Տոկոսագումարը հաշվարկվում է օրական՝ հաշվին առկա մնացորդի նկատմամբ:
4. Ավանդային պայմանագրով որոշված տոկոսադրույքի չափը Բանկը չի կարող միակողմանի նվազեցնել, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:
5. Ավանդի գումարի վրա հաշվարկված տոկոսները, որոնք ավանդատուն բանկային ավանդի պայմանագրում նշված ժամկետում չի ստացել, Բանկի կողմից վճարվում են ավանդատուի առաջին իսկ պահանջի դեպքում:

6. Ավանդի պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո, եթե ավանդատուն չի պահանջում վճարել ավանդի գումարը և հաշվարկված տոկոսները, ապա պայմանագիրը համարվում է երկարաձգված Բանկում այդ պահին գործող ցպահանջ ավանդի համար սահմանված պայմաններով:

Լրացուցիչ տեղեկատվություն

1. Ժամկետային ավանդային հաշվի բացումը և սպասարկումն անվճար է:
2. Ավանդային պայմանագրի գործողության ավարտից հետո ավանդային հաշիվը փակվում է:
3. Ավանդատուի կողմից ավանդային հաշվով ընթացիկ բանկային գործառնություններ չեն կարող իրականացվել:
4. Ավանդի դիմաց հաշվարկված տոկոսները, ինչպես նաև ավանդային հաշվին մուտքագրված միջոցները ավանդատուին վճարելիս միջնորդավճար չի գանձվում:
5. Բանկ ներդրված ավանդի վերաբերյալ տեղեկատվությունը բանկային գաղտնիք է և Բանկը երաշխավորում է դրա գաղտնիությունը:

Ավանդային պայմանագրի վաղաժամկետ լուծումը

Ավանդի վաղաժամկետ դադարեցման դեպքում Բանկը Ավանդատուին այս ամփոփագրում նշված տոկոսադրույքի փոխարեն վճարում է Բանկում ցպահանջ ավանդի համար սահմանված տոկոսադրույք՝ կատարելով վերահաշվարկ Ավանդի ներդրման օրվան հաջորդող օրվանից սկսած:

Վեճերի և տարաձայնությունների լուծման կարգ

Հաճախորդի և Բանկի միջև ծագած ցանկացած վեճ և տարաձայնություն նախ և առաջ լուծվում է երկուստեք՝ փոխադարձ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ինչպես դատական կարգով, այնպես էլ Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:

ConverseBank

Քաղվածքների և տեղեկանքների տրամադրման սակագներ

Քաղվածքների տրամադրում առձեռն՝ Բանկի տարածքում (ներառյալ ԱԱՀ)	
Ֆիզիկական անձանց համար	30-օրյա պարբերականության դեպքում՝ 0 ՀՀ դրամ Կրկնօրինակի դեպքում՝ 500 ՀՀ դրամ

Տարբեր հաստատություններ ներկայացնելու համար տեղեկանքներ (ներառյալ ԱԱՀ)	
Ժամկետային ավանդի մնացորդի վերաբերյալ տեղեկանքի տրամադրում	6,000 ՀՀ դրամ

Փաստաթղթերի, գործարքի կատարման հիմքերի և այլ տեղեկատվության պատճեններ (ներառյալ ԱԱՀ)	
Մինչև 1 ամիս վաղեմություն ունեցող	1,800 ՀՀ դրամ յուրաքանչյուր փաստաթղթի համար
Մինչև 1 տարի վաղեմություն ունեցող	3,000 ՀՀ դրամ յուրաքանչյուր փաստաթղթի համար
Մեկ տարուց ավելի վաղեմություն ունեցող	12,000 ՀՀ դրամ յուրաքանչյուր փաստաթղթի համար

Քաղվածքի առաքում փոստով (ներառյալ ԱԱՀ)	
Ներհանրապետական և ԼՂՀ	Ֆիզիկական անձանց ՝ 0 ՀՀ դրամ
Միջազգային	Օրենքով և պայմանագրով սահմանված լինելու դեպքում՝ առաքման ծառայությունը մատուցող կազմակերպության սահմանած սակագին Այլ դեպքերում՝ առաքման ծառայությունը մատուցող կազմակերպության սահմանած սակագին **+** 1,500 ՀՀ դրամ

Քաղվածքի առաքում պատվիրակված առաքման ծառայության միջոցով (ներառյալ ԱԱՀ)	
Ներհանրապետական և ԼՂՀ	3,000 ՀՀ դրամ
Միջազգային	Առաքման ծառայությունը մատուցող կազմակերպության սահմանած սակագին **+** 3,000 ՀՀ դրամ

Կապ Բանկի հետ

Հավելյալ տեղեկատվության համար կարող եք՝

- այցելել Բանկի https://www.conversebank.am ինտերնետային կայք
- այցելել Բանկի Գլխավոր գրասենյակի Հաճախորդների սպասարկման գրասենյակ կամ ցանկացած մասնաճյուղ
- զանգահարել (+374 10) 511 211 հեռախոսահամարով
- Viber ՝ +374 95 511 211
- Skype ՝ conversebank-callcenter

ConverseBank

Ծանուցում ավանդների հատուցման երաշխավորման պայմանների և կարգի մասին

Ձեր ավանդի հատուցման երաշխավորողն է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը (այսուհետև՝ Հիմնադրամ):

Ավանդի արժութային կառուցվածքը		Ավանդի երաշխավորման առավելագույն չափը
Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ		10 միլիոն ՀՀ դրամ
Եթե նույն բանկում ունեք միայն արտարժութային ավանդ		5 միլիոն ՀՀ դրամ
Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ	Եթե դրամային ավանդը 5 միլիոն դրամից ավելի է	10 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)
	Եթե դրամային ավանդը 5 միլիոն դրամից պակաս է	5 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային ավանդը՝ 5 միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով)

Հիմնադրամի գտնվելու վայրը՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 6

Հեռախոս՝ (+37410) 58-35-14, (+37410) 59-26-64

Ծանուցում Ֆինանսական համակարգի հաշտարարի վերաբերյալ

Տեղեկացնում ենք, որ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ կողմից Ձեզ մատուցվող ծառայությունների հետ կապված տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:

Բանկի և Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի միջև կնքված համաձայնագրի համաձայն՝ Բանկը հրաժարվում է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից միայն այն գույքային պահանջների մասով, որոնց չափը չի գերազանցում 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, իսկ գործարքի գումարի չափը չի գերազանցում 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

Հասցե՝ 0010 ք. Երևան, Մ. Խորենացու փող. 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն 7-րդ հարկ

Էլ. փոստ՝ info@fsm.am

Հեռախոս՝ (+37460) 70-11-11

Ֆաքս՝ (+37410) 58-24-21